

ԿԹՎՈՐԻ ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ՆԱԽԱԿԻԹ

Կթվորի անձնական հիգիենան և կթից առաջ իրակա-
նացվող գործողություններն ուղղակիորեն ազդում են
կաթի որակի վրա:

Կթվորի անձնական հիգիենայի պահպանության համար անհրաժեշտ է՝

- մաքուր պահել ձեռքերը, առողջ պահել մաշկը, չերկա-
րացնել եղունգները
- կիրառել մաքուր բժշկական ձեռնոցներ ձեռքի մաշկի
վնասվածքներ ունենալու դեպքում
- պարբերաբար ենթարկվել բժշկական սրուգման
- վարակիչ հիվանդություն ունենալու դեպքում հեռու
մնալ կիթ կապարելուց
- յուրաքանչյուր կովին կթելուց առաջ լվանալ ձեռքերը
գոլ ջրով և օճառով, ապա լավ չորացնել
- կիթը կապարել մշտական մաքուր արտահագուստով
Քանի որ կենդանիների հետ աշխատելիս արտահա-
գուստի մաքրությունը պահպանելը դժվար է, ուստի
ցանկալի է օգտագործել չորջվող և փեղում ջրի շիթով
մաքրվող արտահագուստ:

Նախքան կիթը սկսելը խիստ անհրաժեշտ է՝

- Կթից առաջ լվանալ, ապա չորացնել կթի բոլոր պա-
րագաներն ու սարքավորումները:
- նախապես կանգնեցնել պառկած կենդանիներին՝
ապահովելով նրանց արտաթորումը,
- մաքրել անասնաշենքը գոմաղբից և մեզից,
- դաղարեցնել կերակրումը՝ փոշի չքարծրացնելու հա-
մար,
- մաքրել կուրծը և դրան հարող հատվածները՝ լվանա-
լով գոլ ջրով և լավ չորացնելով,
- ֆիքսել կենդանու պոչը անհրաժեշտության դեպքում,
- կապարել կրծի մերսում, մինչև «կաթը եռացնելը»,
- կաթի առաջին շիթերը լցնել առանձին փարայի մեջ
և հեռացնել:

Կթի պարագաների և սարքավորումների մաքրման
համար կիրառել 0.5-1%-անոց կաուստիկ սոդայի լու-
ծույթ, որից հետո մաքրաջրել գոլ ջրով և լավ չորացնել:

**ՉԳՈՒՇԱՑՈՒՄ՝ կաուստիկ սոդայի հետ աշխատել
խիստ ուշադիր, քանի որ հնարավոր է առաջանան մաշ-
կի այրվածքներ: Ծնելիս քթին մոտ չտանել, քանի որ
նրա փոշին ևս ունի այրող հատկություն:**



Գոյություն ունեն ժամանակակից մաքրող այլ
միջոցներ ևս՝


Rapidwash 710

- հիմնային լվացող միջոց է
- նախաբերված է միայն օրգան ական ծագման նստ
վածքների մաքրման համար
- օգտագործել 1%-անոց լուծույթը

Acidwash plus 420

- թթվային լվացող միջոց է
- նախաբերված է անօրգանական ծագման նստվածք-
ների մաքրման համար
- օգտագործել 1%-անոց լուծույթը

Կրծի մաքրման համար գոյություն ունեն *DeLaval*
ընկերության առաջարկած միանվագ օգտագործման
թաց և չոր ախտահանիչ անձեռոցիկներ, որոնց առավե-
լությունը կայանում է նրանում, որ ախտահանիչ են և
ցուրտ եղանակներին առանց կուրծը թրջելու կարելի է
թաց անձեռոցիկով մաքրել, բացի այդ, այս միջոցները
միանվագ են և ամեն կովի համար անհատական, որը
կանխում է կեղտի փոխանցումը մի կենդանուց մյուսին:

 Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

SDA Strategic
Development Agency
Strategies for Development